ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի Էջմիախնի խճուղի 47 հողամասի վրա նախատեսվող ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսումների (առաջին փուլ)

08.01.2025թ. Արաքս համայնք, գ.Ապագա

2025 թվականի հունվարի 8-ին ժամը 14:30-ին ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Արթուր Հարությունյանի կողմից Ապագա բնակավայրի վարչական տարածքում ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Տրանսնախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի մասնագետ՝ Արթուր Մուրադյանը, ՀՀ արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ՝ Պետրոս Ավագյանը, Արաքս համայնքի Ապագա բնակավայրի վարչական ղեկավար, քննարկումների պատասխանատու և վարող՝ Երեմ Պողոսյանը, ձեռնարկող՝ Արթուր Հարությունյանը, Արաքս համայնքի Ապագա գյուղի բնակիչներ՝ Էդգար Հակոբյանը, Մուշեղ Մկրտչյանը, Հակոբ Հակոբյանը, Մարաթուկ Ավագյանը, Սասուն Հարությունյանը, Սարգիս Մարգարյանը, Գևորգ Զորիկյանը, Արուսյակ Բաղդասարյանը, Նունուֆար Մարկոսյանը, Մկրտիչ Մկրտչյանը:

Ելույթներ ունեցան՝

Քննարկումների պատասխանատու, Արաքս համայնքի Ապագա բնակավայրի վարչական ղեկավար Երեմ Պողոսյանը հանդես եկավ բացման խոսքով ներկայացնելով հանրային լսման առարկան: Նա նշեց, որ Արթուր Հարությունյանի կողմից նախատեսվող ավտոգազալցավորման ճնշակայանը գտնվում է բնակավայրի վարչական տարածքում, որտեղ չկան պատմամշակութային հուշարձաններ, գերեզմաններ, էլեկտրական բարձր լարման հոսանքագծեր, ջրագծեր, կոյուղի: Գյուղում ստեղծվելու են նոր աշխատատեղեր, վճարվելու են հարկեր, բարելավվելու է համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը:

Ձեռնարկող՝ Արթուր Հարությունյանը ներկայացրեց իր կողմից նախատեսվող գործունեությունը, դրա տեխնիկատնտեսական ցուցանիշները: Ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցումն ու շահագործումը համայնքի, գյուղի և հարակից բնակավայրերի բնակիչներին հնարավորություն կտա սեղմ ժամկետում կատարել փողադրամիջոցների լիցքավորումը, ժամանակի կորուստ չեն ունենա, կստեղծվեն նոր աշխատատեղեր:

«Տրանսնախագիծ ինստիտուտ» ՍՊԸ–ի մասնագետ՝ Արթուր Մուրադյանը նշեց, որ առաջին հանրային լսումն է, որի առարկան Արթուր Հարությունյանի կողմից Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի Էջմիածնի խճուղի 47 հողամասում նախատեսվող ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատումն է: ԱԳԼՃԿ-ի կառուցման աշխատանքային նախագծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան, որի համար հիմք է հանդիսացել սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը և ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Համաձայն կառուցապատման գլխավոր հատակագծի ԱԳԼՃԿ-ն կառուցվելու է Հանրապետական նշանակության Մ-3 ճանապարհից 23,5մ հեռավորության վրա, մուտքն ու ելքը կազմակերպվում է դաշտամիջյան ճանապարհով և այդ տարածքով չեն անցնում ինժեներական և կոմունիկացիոն գծեր: Հողամասը կառուցապատված չէ, բուսականությունը բացակայում է, հեռու է գտնվում բնակավայրերից: Ներկայացված աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պայմանավորված է շինարարական աշխատանքներով: Մթնոլորտում արտանետումների առաջացումը կապված է շինարարական աշխատանքների իրականացման փուլում՝ շին.տեխնիկայի շարժիչների աշխատանքից առաջացող վնասակար նյութերի արտանետումներով և փոշեառաջացմամբ: Քանի որ շինարարական աշխատանքները ժամանակավոր են, հետևաբար հարկ է նշել, որ այդ արտանետումները մթնոլորտ չեն կարող թողնել զգալի ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Նախնական հայտում ներկայացված են տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, որոնք ուղղված են մեղմելու, նվազեցնելու և կանխարգելելու հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա: Մասնակիցներին առաջարկվեց հարցեր ուղել, ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցման աշխատանքների վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնել:

Հանրային լսման մասնակիցները իրենց համաձայնությունը հայտնեցին ելույթ ունեցողների հետ: Դիտողություններ և առաջարկություններ չունեն:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցման աշխատանքների նախնական գնահատման հայտին և նրանում ներառված մեղմացուցիչ բնապահպանական միջոցառումներին:

Ապագա բնակավայրի վարչական ղեկավար,
քննարկումների պատասխանատու և վարող՝ Երեմ Պողոսյան

Ձեռնարկող՝ Արթուր Հարությունյան

Արձանագրող՝ Պետրոս Ավագյան

հ սիրելիների ներկայությամբ հարգելի հանձնաժողով,
գ. հարգելի ՀՀԵՄ-ների խորհրդի 47 հոդվածի
մասի և հանձնաժողովների աշխատանքային
կանոնակարգի 4-ի հիման վրա հանձնաժողովի
գործունեության ապահովման և հանձնաժողովի
անդամների հանձնարարությունների
կատարման նպատակով հանձնաժողովի նիստերի
քվորումը համարվում է բավարար:

1. Դիդիզյան Երվանդ Սոֆիի
2. Պետրոսյան Արտակ Աղասիի
3. Հարությունյան Հասմիկ Հայրապետի
4. Զոհրաբյան Հասմիկ Հրանտի
5. Մուղնեցյան Արայիկ Մուշեղի
6. Խաչատրյան Դավիթ Դ.
7. Պետրոսյան Հովսեփյան Երվանդի
8. Ասատրյան Հայրապետյան Հայրապետի
9. Սարգսյան Սարգսյան Էդգար
10. Գևորգ. Գևորգյան Հրանտ
11. Հրաչյան Բաղդասարյան
12 Գեոլեոֆար Պետրոսյան
13. Պետրոս Հովսեփյան
14. Սիրարյան Սիրարի Արայիկ